

ված հումքով, ստեղծագործական վարպետության կերտված սյան խարխիլներով կառուցվում է մեծ շինությունը¹⁰։ Այն հյուղավորված բաժանմունքներով տարածվելով բլրի շագաթում, կարծես պաշտպանության տակ էր առնում ամբողջ շրջակայքը։ Երկնային հատվածական սուսումնասիրության հետևանքով վերջինիս ֆունկցիոնալ բնույթը որոշակիորեն չի բացահայտվում։ Այսուհանդերձ հիշյալ հանգամանքները՝ կապված շենքի տեղադրության, շինարարական կու-

տուրայի, մասամբ և հնագիտական ելույթների զուգորդման հետ, հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ շենքը, հավանաբար, վարչատնտեսական գեր է կատարել նորաստեղծ բնակավայրի համար։

Շենքերը է, որ 1988 թ. հունամյ վաղիկի կենդեցուց հարավ գունազարդ տափաշների, խաչազարդ թասերի, մատենագիտոր նստակով ըմպանակի, կավի և քարի սկանաչների բեկորներով հագնեցված հեյլենիստական ժամանակի մշակութային շերտում նույնպես բացահայտվել են կառույցների մեացորդներ՝ նարեչագույն տուֆ քարից կերտված, անթերի մշակմամբ տորաձև խարխիլների առկայությունը։ Ոստմնասիրության այս սեղրեական փուլում զինու հայտնի չէ բացված շինությունների հատակագծային պատկերը, յայն սրանց դրույթունն իսկ վկայում է, որ վերը քննվող շինությունը միակը չէ։ Մ՝ թ. ա. II—I դդ. բլրի յագաթը կառուցապատված է եզել դարաշրջանի շինարարական կուլտուրային բնորոշ, հավանաբար տարրեր բնույթի շենքերով։

Գ. Գ. ՓՈՉԱՐՅԱՆ

¹⁰ Ավանդական ճարտարապետության հիմքի վրա, բայց նորովի են կառուցված Վիրքում՝ Բազիլետի արքայական նստավայրի մ. թ. ա. II—I դդ. ընդարձակ ճարտարապետական համալիրը, որի հիմնական կառույցը բարձրագույն զահլիճն է՝ երկայնական առանցքով տեղադրված սյան տորաձև խարխիլներով կամ Աղվանքում՝ Կապադակի մ. թ. ա. I դարի հասարակական բնույթի շենքը, արանջ նույնպես գործածվել են տորաձև խարխիլներ (A. M. Апакидзе. Города древней Грузии. Тбилиси, 1968, с. 37—41; И. А. Бабаев. Указ. соч., с. 217—227.

ՄԵԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԼԱՎՈՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻԱԼԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՎՐՅՈՒՐՆԵՐ

Վերջին ժամանակներում արտասահմանյան սլավոնագետների և բալկանագետների ուշադրությունն ավելի ու ավելի հաճախ են գրավում վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան միարանությունների հարուստ գրադարաններն ու դիվանները։ Այդ հետաքրքրության ցայտուն օրինակ կարող են հանդիսանալ հետևյալ երեք զբոսերը, որոնք համառոտ կներկայացնենք ստորև։

Inventaire des sources arméniennes sur l'histoire balkanique: D'après le catalogue des manuscrits arméniens de la Congrégation des Méchitaristes—Vienne. Par Agop Ormanjan avec le concours de Reia Zaimova. Sofia. CIBAL, 1980, 99 p.

Բուլղարահայ պատմաբան Հակոբ Օրմանյանը Ռայա Զաիմովայի համագործակցությամբ պատրաստել է «Բալկանների պատմության հայկական աղբյուրների ցուցակը» շ. Տաշյանի «Ցուցակ հայերէն ձևագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա» հիման վրա։ Գիրքը՝ րատարակվել է Սոֆիայում Բալկանյան և Միչերկրածովյան երկրների պատմության ինֆորմացիայի Միջազգային կենտրոնի (CIBAL) կողմից։

Ցուցակում ընդգրկված են բոլոր այն ձևագրերը, որոնք որևիցե առնչություն ունեն Բյուզանդիայի, Օսմանյան կայսրության, քալկանյան ժողովուրդների պատմության հետ։ Ձևագրերի մեծամասնությունը կազմում են Մովսես Խորենացու, Փավստոս Բուղանզի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Մատթևոս Ուսայեցու, Երեմիա Փյոմորճյանի և այլ նշանավոր հայ պատմիչների գործերը։ Անշուշտ, բալկանագետների և հայագետների հետաքրքրությունը կառաջացնեն Բալկանների և Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ XVII—XIX դդ. հայկական աղբյուրները, որոնք շեն հրատարակվել և շեն էլ ուսումնասիրվելու կարող ենք նշել 1821 թ. հունական ապստամբության (№ 779, D—28) կամ 1826 թ. Լեիչերիների ապստամբության մասին (№ 780, T) հատվածները, «Օսմանյան կայսրության պատմությունը» Երկու մասով (№ 786) և մի շարք այլ ձևագրեր։ Անտիպ նյութերի ուսումնասիրությունը և հրապարակումը կհայտնաբերի նոր, մինչ այժմ անհայտ փաստեր, կհաստատի, որ հայերը միշտ էլ մեծ ուշադրությամբ են հետևել թուրքական լծի դեմ բալ-

կանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին: Նմանօրինակ ձեռագրեր, նամակներ պահվում են նաև Մաշտոցի անվան Մատենադարանում (որպես օրինակ կարելի է հիշատակել Ս. Քոլանջյանի խմբագրությամբ լույս տեսած արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարյանի նամակները բալկանյան ժողովուրդների 1821 թ. ազատագրական շարժումների մասին)։ «Քաները կրեանի համալսարանի, Հասարակական գիտությունների», 1971, № 3, էջ 122—140), և կարծում ենք, որ «Հայկական աղբյուրների ցուցակը» հնարավոր է շարունակել, ըստ մասնափակվելով միայն Մխիթարյանների մատենադարաններով:

Арменски пътеписи за Балканите XVII—XIX в. Съставителство, превод од древноарменски и коментар Агоп Орманджиян. София, Наука и изкуство, 1984, 284 с.

Այս դիրքը նույնպես հրատարակվեց Հ. Օրմանյանի աշխատասիրությամբ: Դա առաջին փորձն է՝ ի մի հավաքելու XVII—XIX դդ. հայկական Համափողոկական նոթերը Բալկանների մասին: Բուլղարահայ գիտնականը ոչ միայն կազմել է դիրքը և թարգմանել տեքստերը գրաբարից բուլղարերեն, այլև կատարել հսկայական հետազոտական աշխատանք, մեկնարանելով և ծանոթագրելով ընդհանուր նախարանում Օրմանյանը նշում է, որ սույն դիրքը պատրաստելիս նա լայնորեն օգտվել է Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների մատենադարաններից և դիվաններից: Հայ ճանապարհորդների, պատմաբանների, աշխարհագրագետների հետաքրքրությունը Բալկանների և հարավ-սլավոնական ժողովուրդների նկատմամբ XVII—XIX դդ. սկզբին բացատրվում է երկու հիմնական պատճառներով: Առաջին՝ անհրաժեշտ էր ընդլայնել հայրենակիցների գիտելիքները պատմության և աշխարհագրության բնագավառներում, ավելի մանրամասնորեն ծանոթանալ այն ժողովուրդների կյանքին, որոնք նույնպես ստրկացած էին Օսմանյան կայսրության կողմից: Երկրորդ նրանք ձգտում էին հետադոտել հայ գաղթականների տեղափոխությունների ուղղությունները հայ պետականության վերջնական կործանումից հետո (XV—XVI դդ.), նկարագրել հայ գաղթավայրերի վիճակը բալկանյան երկրներում: Բալկանների մասին ուղեգրությունների հեղինակներն էին առավելագույն Մխիթարյան միաբանությունների անդամները, որոնք կանոնավոր այցելում էին իրենց հոգևոր հոտին Քուրթիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Սերբիայում, Ռումինիայում, Հունգարիայում:

Բացառություն է կազմում Լեհաստանի հայկական գաղութի խոշոր հասարակական և եկեղեցական գործիչ, մուլի ճանապարհորդ Սիմեոն

դպիր Լեհացու (1584—1637) ռուղեգրությունը: Իր ձեռով և բովանդակությամբ այդ ստեղծագործությունը XVII դարի հայ գրականության մեջ եղակի երևույթ էր: Այստեղ տրված են բազմազան տեղեկություններ տարբեր երկրների, քաղաքների և ժողովուրդների մասին, որոնց Լեհացին հանդիպեց իր ճանապարհին: Տասներկու տարի նա շրջում էր Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում: Գրախոսվող ժողովածուն բացվում է «Ուղեգրություն» այն հատվածներով, որտեղ նկարագրված են Լեհացու ճանապարհորդությունները: Լվովից Կոնստանդնուպոլիս և Կոնստանդնուպոլիսից Վենետիկ: Հեղինակի ճանապարհը անցնում էր Բուլղարիայով, Քոստիայով և Դալմաթիայով, Անկեղծ համակրանքով Լեհացին գրում էր օսմանների լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների մասին, հետաքրքրական և օգտակար են նրա դիտումներն ու մտորումները Օսմանյան կայսրության մայրաքաղաքի և նրա ընկալիների կյանքի վերաբերյալ: Ս. Լեհացու «Ուղեգրություն» բալկանյան ժողովուրդների պատմության և կենցաղի ամենաճշմարիտ սկզբնաղբյուրներից է:

XVIII դարի երկրորդ կեսին հաճախակի է Բուլղարիա և Սերբիա այցելել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան, աշխարհագրագետ, ճանապարհորդ և վաճառական Հովհաննես Թովմաճյանը (1717—1806): Առևտրական գործունեությունը նրան հնարավորություն ընձեռեց ավելի քան երեսուն տարվա ընթացքում լինել Արևմտյան և Հարավարևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի շատ երկրներում, Հնդկաստանում, Եթովպիայում: Այդ բազմաթիվ ուղեգրությունների ամփոփումը դարձավ «Պատմություն տր Յովհաննիս Թովմաճյանեան» որ զամս երեսուն իկեանս իւր շրջեցաւ յԵւրոպիայ, յԱսիայ, ՚իՀնդկիս, և յԱֆրիկէ, ՚ի Հապշուտան» գիրքը (գրված է 1790 թ. Վենետիկում, լույս է տեսել Կ. Պոլսում): Բալկաններին վերաբերող շատ գլուխները ղեկավարված են Օրմանյանի ժողովածուի մեջ: Չնայած Թովմաճյանին գլխավորապես հետաքրքրում էին առևտրի զարգացման հարցերը, տոնավաճառներն ու շուկաները նշված երկրներում, նա բավական հանգամանորեն նկարագրել է Բուլղարիայի, Սերբիայի և Վալախիայի մի շարք քաղաքներ ու գյուղեր, զայրույթով և ցավով պատմել անմեղ քրիստոնյա ընկալության նկատմամբ ենթադրյալների գործած բարբարոսությունների մասին:

Գրքում առաջին անգամ հրատարակվել է «Նամակը Բելգրադից», որի հեղինակն է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Միքայել Սերաստացի Վարդեհեսյանը: Այս նամակը գտնվում է Սուրբ Ղազար վանքի դիվանում և մինչ այժմ հայտնի չէր հայ-սլավոնա-

կան պատմական կապերը հետազոտողներին: Հայր Միքայելը երկար ժամանակ Բելգրադի հայկական փոքր համայնքի հոգևոր հովիվն էր, նա հաճախ ուղևորվում էր Պոլիս, Սոֆիա, Վիեննա. Բուխարեստ: Աթոսում, սերբո-բուլղարական Հիլանդար վանքում, հայ հոգևորականը ծանոթացել է մտերմացել էր բուլղարական ազգային վերածնության խոշոր գործիչ Սոփրոնի Վուչանսկու (Ստայկո Վլադիսլավովի) հետ: Նրանք միասին ճամփորդություն կատարեցին զեպի Սալոնիկ, մի քանի անգամ մահացու վտանգների ենթարկվելով: 1775 թ. Բելգրադ վերադառնալիս, Մ. Վարդերեսյանը իր ընկերոջը ուղղված նամակում նկարագրել էր այդ ուղևորությունը և Սոփրոնի Վուչանսկուց ստացած իր տպավորությունները: Այստեղ տեղ էր գտել նաև թուրք ավազակների հետ ընդհարման պատկերումը, որը պատմությանը աշխուժություն և արկածային բնույթ է հաղորդում:

Օսմանյան կայսրության եվրոպական նահանգներին է ամբողջովին նվիրված Մխիթարյաններ Ղուկաս Ինճիճյանի (1758—1833) և Ստեփանոս Գյուլիեր Ազոնցի (1740—1824) մեծահույզ տասներկու հատորանոց «Աշխարհագրութիւն շորից մասաց աշխարհի» աշխատության վեցերորդ հատորը (Վենետիկ, 1804), Հեղինակները, որոնք մի քանի անգամ եղել էին բալկանյան երկրներում, օգտագործել էին գերբույն ոչ միայն անձնական տպավորությունները, այլև զանազան հին հունական, հին հռոմեական, հայկական, գերմանական, ֆրանսիական, թուրքական աղբյուրներ և փաստաթղթեր, առևտրականներից, դիվանագետներից, քարոզիչներից ստացած տեղեկություններ, Ինճիճյանն ու Ազոնցը մանրամասնորեն նկարագրել են Բուլղարիայի և Մերբիայի կլիման ու սահմանները, ավելի քան 300 բնակավայրեր և ճարտարապետական հուշարձաններ, ներկայացրել բուլղար և սերբ ժողովուրդների պատմության ու մշակույթի համառոտ ուրվագծեր: Առանձին պատմաաշխարհագրական ակնարկներ են նվիրված Սոֆիային, Պոլովիվին (Փիլիպուպոլիս), Օդրինին (Ադրիանապոլիս), Սալոնիկին, Բելգրադին, Նիշին, Աթոսի վանքային համայնքին և այլն:

Ի՞նչ «Աշխարհագրության» հեղինակները հայրենիքողներին ձգտում էին որքան կարելի է շատ տեղեկություններ տալ բալկանյան ժողովուրդների մասին, ապա Մինաս Բժշկյանցի (1777—1851) ճանապարհորդությունների հիմնական նպատակն էր Բալկանյան թերակղզու հայկական գաղթօջախների պատմության և մշակույթի ուսումնասիրությունը: Հ. Օրմանճյանը համավաճներ է թարգմանել Բժշկյանցի երկու գրքերից՝ «Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով» (Վենետիկ, 1819) և «Ճանապարհորդութիւն

ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս Ինչալազանց սէրէլոց Ի նախնեաց Անի քաղաքին» (Վենետիկ, 1830) և առաջին անգամ Մխիթարյանների դիվանից հրատարակ է նաև ևրա շորս նամակները, գրված Բուլղարիայում գաղնավելու ժամանակ: Թեև Բժշկյանցին գլխավորապես լեզուբանում էին հայ ազգաբնակչության տեղաշարժերի հարցերը, հայ մշակութային հուշարձանները, ձեռագրերը, նրա ուղեգրությունները և նամակները հարուստ նյութեր են պարունակում նաև Լեհաստանի, Ուկրաինայի, Ռումինիայի, Մոլդավիայի, Հունգարիայի և Բուլղարիայի պատմությունն ու մշակույթը՝ ինտազոտողների համար:

«Հայկական ուղեգրություններ» ժողովածուի սազմողը՝ Հ. Օրմանճյանը կարևոր և օգտակար գործ է կատարել: Մինչ այդ բալկանագետները սակավադեպ էին դիմում հայկական աղբյուրներին կամ էլ բոլորովին չգիտեին նրանց գոյության մասին: Գիրքը հնարավորին չափ ծածկում է այս բացը, վկայելով, թե զեռ Ինճյանն անհայտ էր է թաքցնում հայ և բալկանյան ժողովուրդների դարավոր բարեկամության պատմությունը: Ամեն մի թարգմանությանը բուլղարահայ պատմաբանը կցել է փոքր նախաբան, որտեղ հայանում է հեղինակների կենսագրություններ և հիմնական մատենագիտական տվյալներ, համառոտակի բնութագրում է նրանց ստեղծագործությունները, տալիս է նաև քարտեզներ ճանապարհորդությունների երթուղիով: Ամենաղծվարին էր, թերևս, տեքստերի մեկնաբանությունը, որովհետև աշխարհագրական անուններից շատերը հայերենում ստացել էին խեղաթյուրված ձևեր, հեղինակները հաճախ ժամանակավորպես մեքենա սխալներ էին թույլ տվել: Մեր կարծիքով, Հ. Օրմանճյանը հաշոդությամբ է հաղթահարել այդ դժվարությունները, և նրա մի շարք մեկնաբանություններ փոքրածավալ, բայց արժեքավոր գիտական հետազոտությունների բնույթ են ստանում: Գիրքը Բուլղարիայում հետաքրքրություն առաջացրեց և ընդհանրապես դրական կարծիքների արժանացավ:

Gunter Wyrzens. Die slavischen und Slavica betreffenden Drucke der Wiener Mechtharisten: Ein Beitrag zur Wiener Druck- und zur österreichischen Kulturgeschichte. Wien, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, 1985, 337 S.

1985 թ. Ավստրիայի գիտությունների ակադեմիայի հրատարակությունը լույս բնծայեց ավստրիացի հայտնի սլավոնագետ, Վիեննայի համալսարանի սլավոնագիտության ինստիտուտի տնօրեն Գյունտեր Վիրտենի գիրքը «Վերնեսայի Մխիթարյանների սլավոնական լեզուներով

և սյավոնազիտությանը վերաբերող տպագրու-
թյունները խորագրով:

Ղևոնս 1776 թ. Տրիեստում Մխիթարյանների
տպարանում գրքեր էին հրատարակվում կիրիլա-
կան սառատիպերով: Երբ 1812 թ. Մխիթարյան-
ները Վիեննայում տպարան հիմնադրեցին, կայ-
սերական արտոնագրությունով նրանք իրավունք
ստացան «Արևելյան և արևմտյան լեզուներով»
գրքեր տպագրել: Միաբանությունը, որի համար
ստյագրական ոտոժը դարձավ հիմնական զբաղ-
մունքներից և եկամտի աղբյուրներից մեկը,
միանգամից բուռն գործունեություն սկսեց:

Մինչև ձև դարի սկիզբը այստեղ գրքեր էին
լույս տեսնում 50-լեզուներով, իսկ հայկական
գրքերը երկար ժամանակ տպաքանակի ընդա-
նուր ծավալի միայն մեկ քառորդ մասն էին
կազմում:

Կ. Վիտենբերգ, աշխատելով Վիեննայի Մխի-
թարյանների գրադարանում, ծանոթանալով
Վիեննայի խոշորագույն գրադարանների և Սեր-
բիայի ազգային գրադարանի (Բելգրադ) ֆոնդե-
րին, օգտագործելով ազգային մատենագիտու-
թյունները, ի վերջո, կազմեց սլավոնական լե-
զուներով գրքերի ցուցակ, որոնք տպագրվել էին
Մխիթարյանների տպարանում: Ցուցակում ներ-
կայացված և նկարագրված է 360 անուն գիրք՝
եկեղեցասլավոններեն, բուլղարերեն, սերբերեն,
խորվաթերեն, սլովեներեն, չեխերեն, սլավակե-
րեն, լեհերեն, ռուսերեն, ուկրաիներեն և ռուսե-
ներեն, բազմալեզու հրատարակությունները,
սլավոն հեղինակների ստեղծագործությունները
գերմաներեն ու լատիներեն, սլավոնագիտական
աշխատությունները ոչ սլավոնական լեզուներով:

Գ. Վիտենբերգ խոսքերով, նրա ցուցակը հնու
է սպառել լինելուց, որովհետև հարյուրից ավելի
անվանումներ, որոնց մասին հայտնի է տարբեր
աղբյուրներից, դեռ հայտնաբերված չեն:
Այստիպեսի գիտնականի գրքացուցակի
լույս տեսնելը սենսացիա առաջացրեց սլավոնա-
գետների շրջանում, նամանավանդ որ նկարա-
գրված գրքերի մեծամասնությունը գրանցված
չէր ազգային մատենագիտություններում: Նախա-
բանում Վիտենբերգը նշում է, որ Մխիթարյանների
տպագրությունները բազմազան էին և որ միա-
բանության անդամները ցույց տվեցին կրոնա-
կան, քաղաքական, աշխարհայեցողական հան-
դուրժողականության մի զարմանալի օրինակ:
Այստեղ տպագրվում էին տարբեր կրոնների,
հայացքների ու կուսակցությունների ներկայա-
ցուցիչների գրքեր սկսած մուլեգին կաթոլիկների
անհաշտ պրոպագանդայից մինչև Բուլղարական
կոմունիստական կուսակցության շեկավար
Գեորգի Դիմիտրովի «Ռարոտնիչնսկի վեստնիկ»
թերթը:

Չեղինակը իրավացիորեն է նկատում, որ
ամենամեծ նշանակությունը Մխիթարյանների
տպարանը ունեցավ սերբական մշակույթի, գի-
տության և գրականության զարգացման համար:
Տպարանների բացահայտությունը Սերբիայում
ամենասուր արցքերից մեկն էր, որը ՏԻՃ դարի
առաջին կեսին փորձում էին լուծել սերբական
ազգային վերածնության գործիչները: Առաջին
սերբերեն և առհասարակ առաջին սլավոններեն
գիրքը, տպված Մխիթարյանների մոտ, սերբ
լուսավորիչ Վուկ Կարաջիչի մոնումենտալ «Սեր-
բական բառարան» էր (1818 թ.): Չեռագա-
յում էլ հուշակավոր գրողն ու գիտնականը հա-
մագործակցեց հայ տպագրիչների հետ և այս-
տեղ տպագրեց իր երկերի շնորհ մեծամասնու-
թյունը: Սերբերեն լեզվով Մխիթարյանների
տպագրական գործունեության գագաթնակետն
էր դարձել 1827 թ., երբ իրար հետևեց լույս
տեսան երեք գրքեր, որոնք վճռական դեր խա-
ղացին սերբական ազգային մշակույթի զարգաց-
ման համար՝ Դարաջիչի «Նոր կուսակառանխ»
խարգամանությունը, Չերնոգորիայի տիրակալ և
բանաստեղծ Գևտար Դ Պետրովիչ Նյեգոշի «Լեո-
նային պսակը» քերթվածը և Բրանկո Ռադչևիչի
«Մանտիկ «Բանաստեղծություններ»: Այստեղ
հրատարակվեցին նաև Զ. Դանիլիչի, Դ. Դա-
վիդովիչի, Պ. Ատանացկովիչի, Զ. Մագարաշե-
վիչի, Յ. Ստեյչիչի, Ու. Միլանկովիչի և շատ
ուրիշ սերբ գրողների ստեղծագործությունները,
լույս տեսան «Սվետովիդ», «Սրբադիյա», «Մըր-
բեսկա Զորա» և այլ պարբերականներ: Սերբա-
կան գրքերի քանակը, որոնք հայտնաբերված ու
նկարագրված են Վիտենբերգի ցուցակում, անց-
նում է 150-ից: Մեր կարծիքով, Մխիթարյանների
այդ աստիճան բարյացակամ վերաբերմունքը
սերբերի նկատմամբ բացատրվում է նաև մի ան-
կեղծ ձգտումով՝ որևէ ձևով աջակցել թուրքական
լծի դեմ պայքարող բախտակից ժողովրդին:

Տպարանում առաջին անգամ հրատարակվե-
ցին խորվաթներ Դ. Դեմետերի և Յ. Շտրոսսմա-
յերի, սլովեններ Յ. Կոպիտարի և Ֆ. Միկլոշիչի,
չեխեր Յ. Խալուպկայի և Ա. Շեմբերայի, ուկրաի-
նացի Ի. Ֆ. Շոլովացիու և շատ ուրիշների ստեղ-
ծագործություններ: Այստեղ տպագրված բազ-
մաթիվ պարբերականներից կարելի է առանձ-
նացնել բուլղարական «Միրոզրենիեն», խորվա-
թական «Նովի Պոզոր», սլովենական «Զվոնը»
և «Զորան», չեխական «Զպրավի սպոլեչնոս-
ախն», «Վիդենսկի պոսելը», «Սվետոգոր»,
«Վեստնիկը», «Պրավդան», սլովակական «Սլո-
վենսկի նովինի», ռուսական «Պշչիմը», ուկ-
րաինական «Վեստնիկն» ու «Դիլոն»: 1853 թ.
Մխիթարյանները պայմանագիր էին կնքել նաև

Ավստրիայի լուսավորության մինիստրոսթյան դասագրքերի իրացման դիրեկցիայի հետ, որի համաձայն սլավոնական լեզուներով հարյուրավոր դասագրքեր տպեցին սլավոնական գիմնազիաների և միջնակարգ ուսումնարանների համար:

Վիեննայի հայկական տպարանում սլավոնական լեզուներով գրքերի տպագրությունը հայ-սլավոնական մշակութային կապերի պատմության ամենահետադարձական էջերից մեկն է:

Գ. Վիտենսի կազմած ցուցակը մեծապես կնպաստի դրանց հետագա ուսումնասիրությանը:

Հ. Օրմանճյանի և Գ. Վիտենսի՝ գրքերը ցույց տվեցին, որ Վենետիկի և Վիեննայի Միթթարյանների դիվաններում և գրադարաններում պրպտումները շատ արդյունավետ են, ձեռքբերումներով լի: Ժամանակն է, որպեսզի Հայաստանի գիտնականները ավելի առատ օգտվեն այս համազգային գանձարաններից:

Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

К ИСТОРИИ АРМЯНО-ГРЕЧЕСКИХ ОТНОШЕНИИ

В 1918—1919 гг.

После военного поражения Турции в первой мировой войне, в соответствии со статьями Мудросского перемирия 1918 г., державы Антанты приступили к отторжению территорий, завоеванных некогда Османской империей. В этой обстановке выдвинули свои требования также Греция и Армения. Греция попыталась получить «исторические» земли, захваченные ранее турками у Византии, и расширить территорию страны на север и на восток. Армяне стремились освободить Западную Армению от турецких захватчиков. Возникла необходимость армяно-греческого союза.

Первые попытки по налаживанию армяно-греческого сотрудничества были приняты в сентябре 1918 г. руководством маленькой армянской колонии (около 300 чел.) в Афинах. Оно вошло в контакт с Союзом греческих предрентистов с тем, чтобы впоследствии создать греко-армянскую лигу. Одновременно с этим в греческой и армянской печати начали появляться во все большем количестве публикации, посвященные общности интересов армян и греков в борьбе против Турции. Со своей стороны, правительства двух стран начали искать возможные пути для общих действий. Парламент Греции заявил о солидарности с борьбой «за восстановление армянской государственности» и выразил уверенность, что греческое правительство будет требовать на предстоящей мирной конференции «признания и реализации справедливых требований армянского народа»¹. Подобные заявления обнадежили представителей дашнакской Республики и близкие к ним круги армянской зарубежной эмиграции. В ноябре 1918 г. бывший

высокопоставленный сановник османского военно-морского флота и член Армянского комитета в Париже С. Ханзадчи встретился в Салониках, а затем и в Афинах с греческими официальными лицами и предложил им план греко-армянского политического сотрудничества². Высказанная ранее парламентом Греции поддержка Армении была подтверждена в послании греческого короля Александра, направленном Погосу Нубару, и признанием Республики Армении. Практически Греция стала первой европейской страной, признавшей новое армянское государство. Верховный совет союзников признал ее на год позже. В связи с усилением греко-армянского политического сотрудничества интенсифицировались контакты между двумя сторонами на нескольких уровнях. На первом этапе (ноябрь—декабрь 1918 г.) главную роль играли Греческая екуменистическая патриархия и Национальный совет армянской патриархии. В совместном заявлении представителей обеих церквей Г. Чонюса и Давитяна было решено помимо всего прочего создать совместный комитет по репатриации изгнанных со своих земель греков и армян. Особое внимание уделялось поддержке взаимных требований к Турции о возвращении национальных территорий двух народов. При этом отмечалось, что армянская поддержка будет проводиться в отношении требований греков о Фракии, Константинополе, санджаке Никоме-

²J. K. Hassiotis. Shared Illusions: Greek-Armenian co-operation in Asia Minor and the Caucasus (1917—1922).—In: Greece and Great Britain during World War I. First symposium organised in Thessaloniki by the Institute for Balkan Studies and King's College. Thessaloniki, 1985, p. 144.

¹R. G. Hovannisian. The Republic of Armenia. London, 1971, vol. I, p. 272.